

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏԱԿԱՆ

*
* *

Հեզիկ կարկաշով վագում՝ են ալիք,
Փարում՝ փայփայում՝ ափերը կանաչ:
Ջրերի վերայ կախում ռոտնիք
Նոցա հետ խօսում են լալահառաշ:

«Մի՛ վագէք, ալիք, կացէք, կոհակներ.
Մի՛ թողնէք չքնաղ այս վայրն հանգստեան
Եւ վայելէցէ՛ք քաղցրութեան ժամեր,
Մինչ ժաղում է ձեզ շողն արեգական:

«Ա՛խ, դուք չէք տեսնում, կանցնէք այս քլուր —
Եւ կը պղտորի ձեր ջուրը վճիտ.
Այնտեղ այլ երկիր, այլ ափեր տխուր,
Այնտեղ կը գրկէ ձեզ արեան հովիտ:

«Այնտեղ հողն արիւն, արիւն են սարեր,
Ջինջ աղբիւրներն էլ կտրել են արիւն.
Վտակը քերում արիւնտ քարեր,
Թառամեցնում է ծաղկավառ զարուն:

«Սոսկում է երկինք սրի շաշինից,
Մթնել են ոսկի արեւի շողեր.
Ո՛հ, մի՛ հեռանայ, սիրուն գետ, մեզնից,
Մի՛ վագէք, ալիք, կացէք, կոհակներ ...»

Բայց ... մոպեցաւ երեսը գետին.
«Իմ՝ քոյր, եղբայրն են այն ակն ու վտակ —
Գոչեց, զարկուեցաւ սարսաժ ափերին
Ու յառաջ անցաւ կոհակ առ կոհակ:

Ե. ՅՈՂԱՆՆԻՍՅԱՆ.



ՊԵՏԱԿԱՆ ԹԻՒՆ ՍԵՐԱՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ.

Թ. ՆԸՕԼԴԵԶԻ.

(Շարունակութիւն)

Հայուն Բ., որին յետագայ աւանդու-
թիւնն իրաւացի կելլի իրրե զօրաւոր թագաւոր է
գրուատում մեռաւ 379 թ. ամառուան վերջին,
Նրան յաջորդեց իւր եղբայր Արտաշիր Բ., Թերեւս
այս ծերունու գահ բարձրանալու համար ևս այնպիսի
պատճառներ կային, ինչպիսի պատճառներով մի ժա-
մանակ Հայուն հաթնիկեր մանուկը թագաւոր պը-
սակուեցաւ: Իրրե արքայազն կուսակալ Ադիարենէի
(հին Ասորեստանի մի բաժնի) Արտաշիրն (արդէն
344-ին և գեո 376-ին) մեծապէս մասնակցել էր
քրիստոնէութիւնը ճնշելու գործին: Սակայն սրա
գահ ամրապնդուց յետոյ քրիստոնէից հալածանքը
դադարեց. գուցէ որոշ դիմումը և կամ թերեւս
խիկ սովորական արեւելեան ծուլութեան պատճառով:

Նոյն իսկ մայրաքաղաքում կարող էր կրկին
մի եպիսկոպոս նստել: Երբ սակայն Արտաշիրը մե-
ծամեծների հետ սկսաւ բռնութեամբ վարուիլ և
նրանցից մի քանիսին սպանեց, այն ժամանակ մեծա-
մեծները նրան գահավէժ արին (383-ին կամ 384-ին):

Սրա յաջորդը Շապուհ Գ., Հայուն Բ.-ի որ-
դին, գահ բարձրանալուն պէս դեսպաններ ուղար-
կեց Ա. Պոլիս ուր նրանք մի հաստատուն խաղա-
ղութեան գաշն կուցին (384): Սա կարճ ժամանակ
թագաւորեց, որովհետեւ արդէն 388 կամ 389-ին
մեծամեծներից սպանուեցաւ:

Սրա յաջորդը և որդին (Թերեւս եղբայրը)
Բադրաժ (1) Գ., որի մականունն է Կրմանշահ, «Կըր-
մանի թագաւոր», որովհետեւ իրրե գահաժառանգ
Կրմանի կառավարիչ էր եղել, հռովմայեցուց հետ
բարեկամութիւն պահպանեց և քրիստոնէականների հետ
գլխաւորութեամբ վարուեց, հռովմեացիք եւ պարսիկնե-
րը 290-ին ըստանեցին իրենց մէջ Հայաստանն այնպէս, որ
մեծազոյն բաժինը պարսկական եւ փոքրագոյնը յունական
հարկատու տէրութիւններ դարձան: Այս ըստանումից յե-
տոյ դեռ շատ շփոթութիւններ են տեղի ունեցել, սակայն
ըստանումն տեսել է մինչեւ արաբական ժամանակը:
Բահրամ Գ. ևս բռնի մահով է մեռել, ինչպէս
աւանդութիւնն ասում է «չարագործները» նրան նե-
տահար սպանեցին (ամառը 399-ին):

Սրա յաջորդը Յազկերտ (Iezdegerd = Եզդիգերդ)
Ա. որդի Հայուն Բ.-ի կամ Հայուն Գ.-ի, թը-
ուում է թէ արդէն Բահրամ Գ.-ի ժամանակ թա-
գաժառանգ պէտք է նշանակուած լինէր կամ թէ

* Տես Արարատ. համար 9. եր. 350—355:

1. Տես Ղ. Փարսեցի Դր. Ա. ԺԲ. եր. 49. Յետ այ-
սորիկ մեռաւ Շապուհ արքայ պարսից, եւ թագաւորեաց
Վրամ որդի նորա որ էր Կրման արքայ:

չէ որ և է իշխանական պատուի արժանացած, որովհետև սրա անունը Բահրամի զրամների վրայ և նրա անուն հետ միասին է պատահում: Պարսկական աւանդութիւնը Յազկերտին թէպէտ և մեծ խելք է վերագրում, բայց շատ վատ ընաւորութիւն: Սակայն դրա փոխարէն քրիստոնեայ վկաներն աւելի նպաստաւոր դատաստան են անում նրա վրայ: Ստոյգ պիտի համարուի անշուշտ, որ նա «մեղաւոր» մականունն ստացել է այն պատճառով, որ մեծամեծներէրի հետ խտրութեամբ, գուցէ նոյն իսկ բռնութեամբ էր վարուում և մոգերին չէր սիրում, իսկ ընդհակառակն քրիստոնէից վերաբերութեամբ շատ համբերատար էր:

Քրիստոնեաներն համարձակութիւն ունեցան նոյն իսկ մայրաքաղաքում մի ժողով գումարելու (410) և կատարելապէս կազմակերպուելու: Թագաւորը գործ դրաւ այս եկեղեցու պետին, որ «կաթողիկոս» տիտղոսն ունէր և եկեղեցական տեսակէտով բոլորովին անկախ և մի իշխանաւոր էր: Ոչ միայն իրրեղեսպան կայսեր մօտ ուղարկելու համար, այլ նաև միջնորդ այն երկպառակութիւնը բառնալու, որ տեղի էր ունեցել իւր և իւր եղբօր մէջ, որ կառավարիչ էր Պերսիս նահանգի: Սակայն այս պատճառաւ միայն նա դեռ քրիստոնեայ չէր և ամենևին չը վարանեց իսկ, երբ Սուզիանայի եպիսկոպոս Արգան կոյր եռանդով զորաստորեան տաճարների վրայ ձեռք մեկնեց, խիստ պատիժներ նշանակելու: Բայց հէնց այն համբերատարութիւնը քրիստոնէից վերաբերութեամբ գրգռեց պարսիկ մոգերի ատելութիւնը: Այն հանգամանքն ևս, որ նա լուրջ կերպիւ մտադիր էր Հռոմի հետ խաղաղութեամբ ապրելու, պատերազմասէր աւագանուն շատ էլ դուր չէր գալ: Մի խաղաղութեան և բարեկամութեան դաշն կոչեց հրապարակեց հետ 408-ի ամառը, որով նա ինչպէս թուում է, թէդոս Բ. անչափահաս կայսեր կառավարութեան համար կատարեալ երաշխաւորութիւն յանձն առաւ:

Պարսկական Հայաստանին նա մի վստահելի աւատական թագաւոր տուաւ յանձին իւր որդի Շապուհի: Մենք ամենայն կերպիւ իրաւունք ունինք սրան իւր ժամանակի և երկրի հանգամանքներին նայելով մի բանիւրուն իշխան համարելու: Բայց նա

1. Պարսից թագաւորները հարկաւ թոյլ չէին տալիս այնպիսի եկեղեցական կազմակերպութիւն, որի գլխապետը արտասահմանում էր ապրում: Այդ ժամանակի վերաբերութեամբ ի հարկէ չէ կարող խօսք լինել, որ Հռոմը կամ Կ. Պօլիսը ամբողջ երկրիս վրայ գերագոյն եկեղեցական իշխանութիւն ունեցած լինին: Ժան. Հեդ.

Անշուշտ Մարակ Պարթիւից սկսած հայ կաթողիկոսների Կեսարիա ժողովարանում չը գնալ պատճառներից մէկն էլ այս էր: Ժան. Թ.

Հաճելի չեղաւ պարսից Աստուծուն, որ նրան հեռաւոր Վրկանում (Հիւրկանիա) հրաշքով յանկարծամահ արաւ: Մենք այդ հրաշքը իսկապէս ամենապարզ կերպիւ ենք բացատրում, որ նա իշխանաւորների ձեռքով սպանուել է (հաւանորէն 420-ի ամառուան վերջին): Ոչ ապաքէն սրա նախորդներից երեքն էլ բունի մահով էին զրկուել իշխանութիւնից և երկուսն յատկապէս սպանուել:

Յազկերտի մահուանից յետոյ նրա որդի Շապուհը շտապում է Հայաստանից դէպի մայրաքաղաքը, անշուշտ իւր հօր փոխանակ թագաւորելու համար, սակայն սպանուում է մեծամեծներից: Արովհետև զրանք Յազկերտի ընդդէմ այնպէս զայրացած էին, որ վճռեցին նրա որդեղը զրկել գահակալութիւնից և թագաւորացրին մէկ հեռաւոր ազգականի, որի անունն էր Խոսրով: Սակայն Յազկերտի մի այլ որդին, Բահրամ (Առամ) անունով գահակալութեան համար կոխ սկսաւ նրա դէմ: Սա իւր հօր կենդանութեան միջոցին ապրում էր մի հզօր աւատական թագաւորի, Հիւրայի (Եփրատից դէպի արեւմուտք, անապատի եզերքին) արարական թագաւոր ալ Մունդերի (Alamundaras) մօտ: Հաւանորէն իրրեւ պստորական, Մունդիրը օժանդակեց սրան գահակալութեան ամենայն ուժով թեկնածութիւնը: Այդ ժամանակ երեւի առաջին անգամ արաններն ազդու կերպով միջամտեցին պարսից գործերին: Բազմաթիւ արար ջոյիւններով Մունդիրը կանգ առաւ Հիւրայից չորս օրուան ճանապարհ հեռու մայրաքաղաքի դռների առաջ և անշուշտ օրինական գահաժառանգը կարող էր յոյս դնել նաև մի պարսկական կուսակցութեան վրայ: Ուստի և պայմանադրութեամբ վերջացաւ գործը: Խոսրովը հրաժարուեց, Բահրամը գահ բարձրացաւ, սակայն խոստումն արաւ այլ կերպ կառավարելու, քան թէ իւր հայրը, և մեծամեծներին ու մոգերին կամակատար լինելու:

Բահրամ (Առամ) Ե. որի մականունն է «Գօր», «Յիւ» (իշավայր, վայրի էջ), պարսկական աւանդութեան սիրելին է, որի մասին մինչև իսկ շատ առասպելախառն բաներ են պատմուած: Նա երիտասարդ էր, երբ թագաւորեց, մինչև իւր կեանքի վերջը մնաց զուարճասէր և կանանց խիստ անձնատուր: Նրա մարմնական ահագին ոյժն, մեծ սէրը դէպի որսի արկածներն, գուցէ և անձնական քաջասրտութիւնն իսրեց ամենին և չը տեսան, որ նա իսկապէս մի թոյլ իշխան էր: Երկու բան միանգամից քաղաքականութեան փոփոխելը ցոյց տուին. քրիստոնէից մի կանոնաւոր հալածանքի և Հռոմի հետ պատերազմի ծագումն: Երկու կողմերն էլ կոխ սկսելու պատճառներ դիւրաւ կարող էին գտնել:

Հաւանորէն սակայն պարսիկ աւագանին էր թագաւորին այդ բանին դրդողը: Միմիայն քրիստոնէական-րի հալածանքի պատճառով հռովմայեցիք անշուշտ պատերազմ չէին սկսիլ: Առուի ասպարէզներն էին զլխաւորապէս պարսկական Միջագետքն և հիւսիսից դրան սահմանակից լեռնային երկիրն: Պարսից զօրավարն էր Միհր Ներսէհն, ամենազօրաւոր մեծամեծներից մէկը: Դրա մասին պարսկական փառաբանիչ աւանդութիւնն ասում է, որ յաղթական մուտք է գործել Ա. Պոյսի մինչդեռ սակայն մենք գիտենք, որ նա կռուի հէնց սկզբում մի ծանր պարտութիւն է կրել (421-ի օգոստոսին): Հռովմայեցիք պաշարեցին Մծրինը, բայց նոր զօրարանների մերձեցումն պէս ստիպուեցան շտապով թողնել պաշարումն: Մուշգիրը, որին Բահրամն իւր գահն էր պարտական, կամենում էր իւր արարացիներով Ասորիքն աւիրել, սակայն ստիպուում է մեծ կորստով յետքաշուել: Այս պատերազմը, որի ընթացքը մեզ լաւ յայտնի չէ, երկու կողմն էլ այնպէս թուլացրեց, որ շուտով կամեցան վերջ տալ դրան: Խաղաղութեան դաշինքի (422-ին) մէջ պարսիկները խոստացան քրիստոնէականներին կրօնի ազատութիւն շնորհել, ինչպէս և հռովմայեցիք զրադաշտականներին: Հռովմեացիք պարտաւորուեցան արաբացիներին շնորհելու, որոնք պարսիկ արքայի գերիշխանութիւնը կայսեր գերիշխանութեան հետ փոխել կը կամենային: Այլևս որոշուեցաւ, որ հռովմեացիք պարսիկներին կրկին տարեկան մի որոշ գումար վճարեն կովկասեան դռների (Գարիէլի անցքի) ամրութիւնների պահպանութեան համար, որով երկու տերութիւններն ևս պաշտպանուում էին հիւսիսի վայրենի ազգերի ասպատակութիւններից: Այս պայմանը, որ գրեթէ լոյր խաղաղութեան դաշնագրութիւնների մէջ կրկնուում է, անընդհատ կռուի առիթ էր տալիս: Ինչպէս էլ պատճառարանութիւններն և պայմանագրութեան բառերի դարձուածներն ընտրէին, այնու ամենայնիւ այդ բանը երկու կողմն էլ իրրեւ հարկատուութիւն էր համարում և հռովմեացիք պիտի աշխատէին կարողացածներին պէս շուտով ազատուել մի այդպիսի խայտառակութիւնից: Տիրապետած երկրների փոփոխութիւններ ինչպէս երևում է չէ որոշուել այս դաշինքի մէջ:

Պարսիկների խաղաղութեան պատրաստակամութիւնը գուցէ ամէնից աւելի նրանից էր յառաջա-

ցել, որ մի անգամ էլ այն ժամանակ Բակրաիդ և դիացի երկրներին տիրապետողների, Բուշանաց ազգի, Հայթալ (Հեփթալների) կամ «սպիտակ Հոնաց» հետ պատերազմ վարելու ստիպուած էին: 1

Անշուշտ սրանց դէմ վարած անընդհատ պատերազմների շնորհիւ պիտի լինի զլխաւորաբար, որ հռովմեացիք պարսից կողմից հանգստութիւն վայելեցին հինգերորդ դարում: Պարսիկների հաղորդածը՝ որ իրրեւ թէ Բահրամը Հեփթալներին փառաւոր կերպիւ ջարդել է, մեզ համար դեռ ևս զուտ ճշմարտութիւն չէ:

Հռովմեական պատերազմների միջոցին պարսկական Հայաստանում անկախութեան ձգտումներ էին յայտնուել, բայց խաղաղութեան դաշնագրութիւններից յետոյ Բահրամը կարողացաւ այնտեղ կրկին մի հպատակ թագաւոր նշանակել: Իրենց անձնական շահերը դերադասող հայ նախարարները գործն այն տեղն հասցրին, որ պարսիկները վերջապէս որ հայկական թագաւորութիւնը բոլորովին ջնջեցին, և երկիրը մի գաւառ դարձրին (429-ին): 2 Ինչպէս որ հռովմեացիք այդ վաղուց արել էին իրենց բաժնի վերաբերութեամբ: Այս գործը կատարեցին պարսիկները օգնութեամբ հայկական մի մեծ կուսակցութեան: Հարկաւ այսուհետեւ պարսիկ մարդպաններն հայ նախարարների ու եկեղեցականների հետ նոյնչափ մեծ դժուարութիւններ էին քաշում, որչափ և հայ թագաւորները:

Բահրամի մահուանից յետոյ (438 կամ 439-ին) թագաւորեց նրա որդի՝ Յազկերտ Բ. Սա հալածեց թէ քրիստոնէականներին և թէ հրէաներին: Առ հասարակ էլ հազիւ թէ սա որ և է գովելու արժանիք ունեցած լինի: Սա ոչնչացրեց իւրաքանչիւր ամսուան առաջին օրուան ընդունելութիւնը, որոնց միջոցին ամէն մի նշանաւոր մարդ գանգատներ և աղերսներ կարող էր թագաւորին յայտնել: Պատմում են, որ սա իւր աղջիկը կնութեան է առել այդ ինքն ըստ ինքեան յանցանք չէր զրդաշտական մի անձի համար, որոնց մէջ հէնց այսպիսի ամուսնութիւններն իսկ վարձատրութեան արժանի էին համարուում—բայց ապա սպանել է տուել:—Սրա թագաւորութեան հէնց սկզբում քիչ էր մնացել որ մի հռովմեական պատերազմ ծագէր

1. Այն քեղուին ցեղերն են, որոնց մասին Ամմիանոսն ասում է. «Nec amici nobis unquam nec hostes optandi» (Ammianus 14, 4, 1) եւ դրանցից կազմուած փոքրիկ տէրութիւնները հռովմեական եւ պարսկական գերեզնիանութեան ներքոյ երկու կողմերի համար էլ անսպառ շփոթութիւնների աղբիւր էին թէ խաղաղութեան եւ թէ պատերազմների միջոցին:

1. Համեմատիր Եղիշէ. Վենետ. 1895. յեղ. Ա. երես, 21. յեղ. Բ. եր. 55 այստեղ «յերկիրն իտալական (այլ օր. թեւտալական), իտալական—Հայթալական. Hephthalit—Հեփթալ տես Ղազար Փ. Վենետիկ 1875, դրուագ 9. ճր. 446. 47. 475. 491. 509. Ժան. Թ.

2. Հայ նախարարների անարգ վարման եւ Ս. Մահակ Պարթևի մեծ հայրենասիրութեան նկարագիրը տես Ղազար Փ. դրուագ. Ա. Գլ. ԺԳ. եր. 59: Ժան. Թ.

(441-ին) Սահմանադրութեան արդէն սկսուել էր ասպատակութիւնն ու աւարառութիւնը, բայց մինչև երկու քանակների ընդհարումը խաղաղութեան գաշն կապուեցաւ: Այդ դաշինքում վճռուեցաւ ինչպէս ապագէն էր նախնի և յետագայ դաշինքներում որ երկու տերութիւններից ոչ մէկն էլ իրաւունք չունենայ նոր ամրութիւններ կառուցանելու սահմանադրութեանում: Յազկերտը ստիպուած էր մեծ կուի վարելու Հեփթաղների ընդդէմ: Սրանք քանի մի անգամ ջարդեցին Յազկերտի զօրքը: Սա ինքն այդ իսկ պատճառով երկար ժամանակ Խորասանում մնալ ստիպուեցաւ:

Հայոց մի մեծ ապստամբութիւն ևս որ զբխաւորաբար իւր և ծերունի Միհր Ներսէսի քրիստոնէից դէմ տաճած ատելութիւնից էր ծագել, շատ զբաղեցրեց նրան (450 և 441): Պարսիկների և պարսկական կուսակցութեան Հայաստանում մեծամեծ ճիգերի շնորհիւ միայն հնար եղաւ արքայից արքայի իշխանութիւնը վերականգնելու և այդ էլ քրիստոնէական կրօնին կատարեալ ազատութիւն շնորհելով միայն:

Կը շարունակուի:

Ն. Զարաման



Մովսէս Կաղանկատուացոյ Աղուանից պատմութեան Մայր Աթոռոյ մատենադարանում գտնուած ձեռագիր օրինակները:

(Երկրորդ խումբ):

№ 632

ՈՃԵԻ = 1664

ԱՆՈՒՆ. Պատմութիւն Աղուանից, Նոյն. Թղթեայ: ԿԱՅՄ. Ստուարթթի երեսը լաթածածք, մէջքը կաշեպատ: ՀԱՆԿԱՄԱՆՔ. Խոնամքով պահուած, անթերի: Վերջից 265 Բ. և 264 Թուղթը: ՄեծՈՒԹԻՒՆ 17×14 սմ: ԹՈՒՂԹՔ 264: ԳՐՈՒԹԻՒՆ. Երկսիւն 5×15 սմ: ԳՈՐ. Բոլորագիր: ՏՈՂՔ. 25 իւրաքանչիւր սիւնակում: ՎԵՐՆԱԳԻՐՔ. Միջիւն 22 Թուղթը կարմիր թանաքով, իսկ շարունակութիւնը սեւ: Սկզբնատառը կարմիր երկաթագրով: ՄՏԱՏՈՂ Տէք Բարսեղ արքայիսկզպանն առաջնորդ Ամարասայ վանից: ՏԵՂԻ Ամարասու եւ Հրեմբու սբ. Գրիգորիսի վանորայց: ԺԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ 1664: ՀՐԱՄԱՆՔ. Պետրոս կաթողիկոսին Աղուանից:

ՏԵՂԵԿԻՆԻԹԻԵՔ ԵՒ ՅԵՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ:

Թ. 1^ա

Այս երեսին կայցրած է մի մագաղաթեայ բոլորագիր տախտակ օրացոյցի որի նկարագիրն է՝ 11, 10, 9, 8, 7 սմ: տրամագիծ՝ ունեցող հինգ համակերպ շրջանագծեր հազցրած իրար և երկու-

4. Վարդանանց կամ առաջին կրօնական պատերազմն է անարկուած: Ժան. Թ.

տասան շառաւիղներով համահաւասար բաժանած 12 հաւասար մասերի: Առաջին մեծ շրջանակում գրուած են հռոմէական ամիսների անուններ զօդիակոսի (կենդանակերպի) աստեղատանց 12 նշաններով: Երկրորդ շրջանակում գրուած են կենդանակերպների անունները զօր. կոյս, կշիւ, կարիճ, կշիւ, Երրորդում ամիսների երբայական անուններ, Ադար, Նիսան և լին: Զորորդում հայոց այբուբէնը երկու կարգ, աջ ու ձախ, իւրաքանչիւր հատուածում վեց գիր՝ ուստի և իւրաքանչիւր կիսաշրջանում բոլոր 36 տառերը: Հինգերորդում աստղաբաշխական նշանագրեր իւրաքանչիւր հատուածում երեք գիր: Սոյն մագաղաթի և նորա վրայի շրջանակի կեղծոնից կպած և աստառի հետ միացրած են և երկու փոքրագիր շրջանակ մագաղաթեայ կտորների, որից մեծագոյն կտորը ունի 6' սմ: տրամագիծ, որի վերայ 5 սմ: տրամագիծ ունեցող մի շրջանակ կայ 30 համահաւասար բաժանումներով, որոնց մէջ էլ արարական թիւերն են 1—30: Այս շրջանակի մէջ էլ 4 սմ: տրամագիծով, կարմիր ներկած մի դատարկ շրջանակ կայ, որի կէս տրամագիծի մեծութեամբ մի նոր լուսնակ շրջանակ 11 աստղանիշներով (աստղալից երկինք): Իսկ փոքրագոյն մագաղաթիկը 5 սմ: տրամագիծ ունի և նոյն կեղծոնից կարած է. այս երրորդ մագաղաթէ շրջանակի մէջ կարուած է 2 սմ: տրամագիծով մի շրջանակ, որ ծածկում է երկրորդ շրջանակի վրայի աստեղազարդ շրջանակը: Իսկ շրջանակի եզրի հակադիր կողմից կտրուած է մի փոքր, որով տակի շրջանակի ամսաթիւն երևում է: Սոյն երկու կտոր մագաղաթները մեծի հետ համակերպ լինելով միջնախարում միացած են իրար հետ թելով: Երկուքն էլ ունին ցուցականներ, մինի երկարութիւնը 2 սմ: միւսին 1: Փոքրինը կիսով չափ կտրուած: Միջնակ մագաղաթի ակնջը ցուցամատի պէս պտտուում է ամիսների և կենդանակերպների երկոտասան անունները ցոյց տալով, իսկ փոքրիկինը միայն ամսաթիւների համարները: Սոյն տախտակ օրացոյցի միւս երեսին գրուած է սովորական նոր բոլորագրով և նոր (?) սեւ թանաքով «Թի. ՌՃԺԱ յիշատակ է Պետրոս կաթողիկոսին Աղուանից»: Այս երեսի վրայ կան նաև մի քանի կիսաշրջուած հայերէն և ռուսերէն ստորագրութիւններ:

Թ. 1^բ

Սոյն երեսին գրուած են շարական երգողաց անունները:

— «Ռուական» Բի. և Հայոց:	Բրիստ.	Հայոց
Ա. Իսահակ Հայրապետն	ՆժԹ.	«
Բ. Մեսրոպ Վարդապետն	ՆԿԼ.	«
Գ. Յօհան Մանգակունին	ՆԶԻ.	«